№ 20 Փետրվարի 9 (21) 1880 Փետրվարի 9 (21) № 20

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ մի չարագործութիւն։—Ներքին տեսութիւն։ Նամակ խմբագրին, Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թուրքիա։ Հայաստանի մէջ հողատիրութիւն։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։ Բանասիրական։ «Արարատեան» ընկերութեան տեղեկագրի առիթով։

ԴԱՐՁԵԱԼ ՄԻ ՉԱՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

—

Փետրվարի 5-ին Ս. Պետերբուրգում պատահած սարսափելի անցքի լուրը կայծակի արագութեամբ տարածվեց ամբողջ Ռուսաստանում։

Ընչայտ չարագործները դարձեալ փորձեցին ձեռնամուխ լինել թագաւոր Կայսրի թանգագին կեանքին։

Բայց բաղդաւորապէս թագաւոր Կայսրը և Նրա ամբողջ ընտանիքը անվնաս մնացին։

Հեռագրական լուրը Թիֆլիս հասնելուն պէս, բոլոր եկեղեցիներում մաղթանքներ կատարվեցան թագաւոր Կայսրի երկարակեցութեան համար։ Գիշերը քաղաքը լուսաւորված էր։

Նոյն օրը ամբողջ Ռուսաստանն էլ մաղթանքներ էր կատարում իր թագաւորի կեանքի համար, որի քսան և հինգ տարվայ թագաւորութեանը նա այդքան երախտապարտ է։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 5 փետրվարի

Թանգութիւն և հացի պակասութիւն—ահա այն երկու սրտաճմլիկ բառերը, որ այս րոպէիս լսվում են մեր գիւղականների բոլորի բերանից։ Եւ արդարև ուրիշ ինչ բան կարող էր մտածել խեղճ գիւղականը այս ժամուս, երբ ամենայն կողմ սաստիկ զգալի է դարձած հացի պակասութիւնը և փողոցում նրա գինը հասած է աներևակայելի բարձրութեան, իսկ ինքը, խեղճ գիւղականը, իր մառանում հաղիւ մի երեք օրվայ պաշար է տեսնում։ Նա տէր է մի մեծ դերդաստանի, որին կերակրում է իր սեպհական միջոցներով, բայց այժմ հացի և առհասարակ կենսական բոլոր առաջնակարգ պահանջների արտաքոյ կարգի թանգանալու պատճառաւ, նա այլ ևս անկարող է կառավարել իր գերդաստանը։ Լուսաւորութիւն, հասարակական բարեկարգութիւն, բոլորը, բոլորը մոռացութեան են տված և այս րոպէիս ամենեցուն և իւրաքանչիւրին զբաղեցնողը մի միայն հացի խնդիրն է։

Ահա թէ, սիրելի ընթերցող, ինչ վիճակ բերին մեր երկրի վրա այս անցեալ 1879 թվի երաշտութիւնը, և մուկն ու մորեխը մի կողմանէ, և մեր ժողովրդեան անտարբերութիւնը և անհեռատեսութիւնը միւս կողմանէ։ Բայց տնտեսագէտներին թողնելով այդպիսի դրութեան պատճառների ու նրանց դէմ հարկաւոր նախազգուշութեան միջոցների որոնելը, մենք բաւականանանք ընթերցող հասարակութեան առջև մեր երախտագիտական ըզգացմունքների արտայայտութեամբը, որ իւրաքանչիւրի համար մի քաղցր բարոյական պարտաւորութիւն է։ Պատճառ՝ անկարելի է զանցառութեան տալ մի անհատի բարեգործութիւնքը, որ այսպիսի կրիտիկական միջոցում զգալով ժողովրդի իրանց սեպհական ձայնով և խառնելով նրանց, միմեանց տեղը գործածել։

Մշտնջենաւոր պատոյ անդամների թւում, որտեղ Թիֆլիսեցի պ. Ե. Դէորգեան Փիթոյանցի անունը կայ միայն, որին մեծ պատիւ է տալի այդպիսի դէպի ազգը ունեցած հանկարութիւնը, մենք սպասում էինք, որ կը գտնենք Վեհափառ Կաթողիկոսի ամենայն հայոց անունը... Մենք կարծում էինք, որ եթէ Վեհափառ Տիրոջ անունը չը կայ մշտնջենաւոր պատոյ անդամների թւում, երևի անպատճառ կը լինի նա ժամանակաւոր նուիրատուների անունների թւում։ Բայց սրանում նոյնպէս չատ սխալվեցանք։ Երբ տեսնում ենք Կոստանդնուպոլսի ժամանակաւոր նուիրատու բաժնորդների թւում Ց. Նէրսէս Պատրիարքի, խորէն արքեպիսկոպոսի, չատ վարդապետների և մի քանի քահանաների անունները, սրանց բոլորի զլխաւորի—Հայրապետի անունը տեղ չէ գտել ցուցակում... Վաղարշապատը առհասարակ չատ անտարբեր և խուլ է մնացել դէպի մի այսպիսի ազգային չատ օգտաւէտ գործ, նա չէ մտածում հոգևոր կերակուրի միջոց տալ քաղցածներին և ծարաւներին իր ազգի ապագայ անդամներից։ Ոչ մի արքեպիսկոպոսի և եպիսկոպոսի, ոչ մի վարդապետի և քահանայի անունը Վաղարշապատից չենք տեսնում ցուցակում։ Միմիայն նուիրատու ենք գտնում այնտեղ, այն ևս աչխարհականներից....Մենք ըզժուարանում ենք այս ցաւալի և հրէչաւոր երևոյթը բացատրելու, սպասում ենք, որ Վաղարշապատը ինքը բացատրէ մեզ և արդարանայ, եթէ կարող է, այսպիսի մի անտարբերի, բռնադատված ենք ասել, գործից։ Երբ օտարազգիները՝ գաղղիացի, ռուս և վրացի, նաև թուրքերն կամկրում են «Արարատեան» ընկերութեանը, մեր սուրբ հայրերը էջմիածնի խնայում են իրանց, եթէ ոչ բուբլիները, գոնէ կոպէկները զցել ազգային գանձանակը.... Ցաւալի չատ և անտանելի իրողութիւն.... Եթէ Ամոռը ոչինչ չէ տուել ուսումով սովածների համար, գոնէ այժմ զանց չանէր հացով սովածներին կերակրելու համար չը խնայել իր օգնութիւնը։

Եթէ նայենք զանազան տեղերից նուիրատուների ցուցակն և համեմատութիւն անենք, չատ անմիխիթար երևոյթներ են յայտնվում։ Սկսենք Թիֆլիսից, որտեղ տեսնում ենք երկու միայն քահանաների նուէրը, երբ նրանց թիւը 100-ից էլ աւելի է....Դառնում ենք դէպի ձեզ այժմ, տէր հայրեր...Մթթէ այն բուբլիներից, որոնց հաւաքում էք դուք պակներից, թաղումից, կնունքից և մեռելոցներից, մի քանի կոպէկ չէիք կարող ընծայել ձեր հոգևոր որդիքներին խաւարից դէպի լոյս հանելու համար։ Մենք աչխարհականներս ձեզանից պէտք է օրինակ առնենք, դուք պէտք է մեզ դէպի բարի և ազգային գործը ուղղէք, բայց եթէ այս դուք չէք կատարում, գոնէ մեզանից, աչխարհականներիցս դուք առէք օրինակ։ Մինչև անդամ, տեսէք, պ. Յովհաննեսի քարվանսարայի փակները, որոնք մեծ չարչարանքով են հաւաքում կոպէկներ, չեն խնայել տալ ազգին իրանց աչխատանքից կոպէկների մասը, իսկ դուք, որ մեռելոցների ժամանակ մի գերեզմանից միւս գերեզման երկու քայլ անցնելով բուբլիներ էք հաւաքում, խնայել էք նրանցից մի մասը ազգային գործին ընծայելու....Համեմատելով Թիֆլիսի իգական և արական սեռի նուիրատուների թիւը, երևում է, որ առաջիններից միայն 11 է, դուրս հանելով վեց անձներ quasi այս սեռին պատկանող Արտեմիներն, իսկ արական սեռից մօտ 400։ Ինչով բացատրենք Թիֆլիսի տիկինների և օրիորդների այսպիսի մի տխուր անտարբերութիւնը և անհամակրութիւնը դէպի ազգային լուսաւորութիւնը։ Մթթէ նրանով, որ իրանք խաւարի մէջ են թաղված, հեռանալով լոյսից, բայց չատերը նրանցից չէ որ ինտելլիգենցիային են պատկանում, որ լուսաւորված դասն է համարվում Թիֆլիսում։ Մենք այս ինտելլիգենտ տիկինների և օրիորդների անունները չենք տեսնում, ցաւակցաբար, ցուցակում, այն ինտելիգենտների, որոնք կլուբների, թատրոնի, լօտոյի և թըղթախաղի համար չատ ռուբլիներ են տալի։ Նուիրատու իգական սեռը Ախալցխայի, որ Թիֆլիսի կէսսի չափ էլ չը կայ, հասնում է 45-ի, իսկ Թիֆլիսինը 11.... Երևանի տիկինները և օրիորդները չատ առաւել են տուել, քան թէ Թիֆլիսը. առաջինները 200 ր. համարեա, իսկ վերջինները 54 բուբլի.... միայն

Բայց և արական սեռի թիւը մօտ 400 Թիֆլիսի նուիրատուներից չատ և չատ փոքր է, նայելով, որ 1876 թ. ժողովրդագրութեան համեմատ հասնում է նա մինչև 21,009, որ այժմ ի հարկէ աւելացել է։ Եթէ համարենք ևս 20,000, դուրս թողնելով 1009 թիւը, և ամեն մինը այն հազարներից տար 50 կ. միայն, այն ժամանակ 10,000 բուբլի կը հաւաքվէր Թիֆլիսից։ Եթէ վեր առնենք և իգական սեռի թիւը Թիֆլիսում, որ հանում էր 1876 թ. 16,299, որ այժմ նոյնպէս, յայտնի, է որ առաւել է և դուրս հանենք այն թվից 1299-ին, այն ժամանակ եթէ ամեն մինը սրանցից ստորագրվէր 50 կ., նոյնպէս գումարը կը լինէր այն ժամանակ 7500 ր.

Ուրեմն 35,000 անձերից երկու սեռի ևս, դուրս հանելով 2308 թիւը 1876 թ. ժողովրդագրութեան համաձայն, թէև այժմ ևս առաւել կը լինի ի հարկէ, Թիֆլիսում, եթէ ամեն մինը նրանցից գոնէ 50 կ. տար, կը հաւաքվէր 17,500 ր.։ Բայց ինչ ենք տեսնում....Թիֆլիսում հաւաքվել է միայն 2775 ր.։

Թիֆլիսի արական սեռի նուիրատուներից մեծ մասը օտար քաղաքացիներ են համարեա, այնպէս որ Թիֆլիսի պարոնները չատ առաջ չեն գնացել իրանց տիկիններից և օրիորդներից։ Թիֆլիսի հարուստ վաճառականներից չատ ազգանուններ չենք տեսնում ցուցակում, թէև նրանցից մի քանիսը «մնդալներ» և պատուանշանների համար հարիւրներով և հազարներով են ծախսում։ Բայց առաւել ևս վրդովվելին այն է, որ ցուցակում չը կան Թիֆլիսի երկու եղբայրներ—Կրեզները, որոնք բոլոր Թիֆլիսին յայտնի են իրանց միլիոններով...

Մենք անցեալ տարի «Մշակում» յայտնեցինք այն չը յաջողված այժմ մեր միտքը, որ հարկաւոր է աչխատել թէ տիկիններին և թէ պարոններին ոչ թէ միայն Թիֆլիսի, այլ և ամենայն տեղ, տարեկան ստորագրողներ հաւաքել և, ի հարկէ, ինչպէս «Մշակը» քանիցս անգամ յայտնել է, մի մասնաժողով կազմել։ Այժմ ևս ուշ չէ այս և նոր տարից կարելի է սկսել։

Եթէ համարենք որ Թիֆլիսի հայ բնակիչների երկու սեռից ևս թիւը հասնում է այժմ մինչև 40,000, երբ 1876 թ. 37,308 էր, եթէ չը հաշվենք ևս 10,000, այն ժամանակ եթէ ամեն մի հայ միջին թվով տարեկան մի բուբլ տար, այն ևս անչմարելի կերպիւ կը հաւաքվէր 30,000 ր. ամեն տարի։ Բաւական մեծ գումար ուրեմն չնչին բուբլիական տարեկան տուրքերից։ Բայց չատերն ոչ թէ մի բուբլ, այլ տասնապատիկ անգամ առաւել պատրաստ են և կը լինեն տալու։

Սրա վրա դարձնում ենք Թիֆլիսի մեր եղբայրների և քոյրերի ուշադրութիւնը, յոյս ունենալով, որ մեր խօսքերը չեն ընկնի ապառաժի, այլ բուսաբեր և պտղաբեր հողի վրա։

Բժիշկ Միրիմանեանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

—

«ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԱՌԻԹՈՎ

—

Ստանալով «Մշակի» 1880 թվի առաջին համարի հետ երրորդ տեղեկագիրն «Արարատեան» ընկերութեան 1878—1879 ամի և թերթելով նուիրատու բաժանորդների ցուցակը, մենք նկատեցինք մի մեծ անհոգութիւն և սխալ, որոնց, ի հարկէ, կուզէ ընկերութիւնը հետևեալ տեղեկագրում ցուցակում հարկաւոր էր անպատճառ առանձին տեղ տալ տարեկան նուիրատուներին, որոնք թէև, ցաւակցաբար, չատ և չատ սակաւաթիւ են, բայց կան գոնէ երկու թէ երեք անձեր, որքան յիշում ենք, որոնք պարտաւորվել են ամեն տարի տալ մի յայտնի գումար։

Մեծ սխալը ցուցակում պարունակվում է նրանում, որ տեղեկագիրը Արտէմ անունը ընդունել է որպէս իգական սեռին պատկանող և դասել է «Տիկնայք և օրիորդք» անունների թւում։ Այս սխալը կրկնվում է ոչ թէ միայն Թիֆլիսի նուիրատուների ցուցակում, որտեղ վեց Արտէմներից, օրինակի համար առնենք Արտէմ Իվանիչ Իզմիրեանցը, որ ընծայել է 3 ր., այլ միւս քաղաքների ևս ցուցակում, ինչպէս Բագու, Երևան, Գանձակ, Փոթի, Պետրովսկ, Շուլավեր, Վլադիկավկազ և Դաւրէժ։ Այնպէս որ 17 նուիրատուներ տգեղ սեռից, ցուցակում արժանացել են գեղեցիկ սեռի կոչմանը.... Թոյլ ենք տալիս մեզ բացատրել ընդհանուր և գործաւոր ժողովի ատենադպիրներին, որ Արտէմ անունը ոչ տիկին է և ոչ օրիորդ, այլ արական սեռին է պատկանում և համապատասխանում է հայերէն Յարութիւն անունը։ Փակագծում պատեհ ենք համարում յիշել այստեղ մեր Թիւրքիայի եղբայրներին և տեղեկագրի յօրինողներին՝ որ ժամանակ է արդէն դադարել այբբենարանը աղաւաղելուց և տառերը մինը միւսի տեղ գործածելուց։ Ինչի գրել «Տֆիլիս», և ոչ Թիֆլիս, «Վլատիկաւկազ» և ոչ Վլադիկաւկազ, «Տօքթէօռ» և ոչ դոկտոր և այլն և այլն։ Չենք հասկանում, ինչ հարկաւորութիւն կայ չարտասանել տառերն